ները՝ նուիրեալ միայն Ս. Յակոբայ տաճարին։ Տալու համար առ հասարակ զաղափար մը ժամանակին նուիրական ոճին ու հարստութեանց որակին՝ կօրինակենք հոս այդ յիշատակարանը (ժամանակագրական պատմ. Երուսաղէմի հատ. Բ, էջ 78)։

Նուէրք Եաղուպ աղայի ի գանձս Ս. Աթոռոյն և Ս. Տեղեաց Քրիստոսի Յերուսաղէմ՝ ի յիշատակ իւր և ազգատոհմին իւրոյ — 1 արծաթի ջահ 56 օքքայ՝ կախեալ ի մէջ զմբէթի եկեղեցւոյն Ս. Յակոբայ, և ի ներքոյ նորին կանթեղք 8. 1 մեծ և պատուական վարագոյր Աւագ խորանին ոսկեթել ասղնեգործ, յորոց վերայ տեսանին կերպարանք վիշապաց. 2 ծաղկեայ տիպայ գոգնոց. 1 իւղաբերից շուրջառ. 1 Սոսֆա վարագոյր Ս. Գլխադրի, և որմոց նորին պատկերք տնօրէնութեան փրկչին, գործ սքանչելի հանդերձ արծաթի շրջանակաւ և վանդակաւն. 1 արծաթի կանթեղ ի մատուռն Մակարայ Հայրապետի. 1 ոսկեթել թաւիշաձոր (կլապիտոն աթլաղ տօգուսայ) վարագոյր, Ս. Էջմիածնի խորանին. 1 պղինձ ծորակ անտեսատան, երկաթեայ արտաքին մեծ Դուռն Վանաց։ Ս. Յարութեան 1 ոսկի կանթեղ 600 տրամ ի վերայ դերեզմանին Քրիստոսի, 1 շուրջառ. 1 սաղաւարտ. 1 վակաս. Ս. Յովհաննէս եկեղեցւոյ՝ 1 լեհ չիթ վարագոյր. 1 տիպայ գոգնոց։ Ս. Թորոս եկեղեցւոյ՝ 1 արծաթի ոսկեզօծ սկիհ. 1 տիպայ գոգնոց, Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ՝ 2 տիպայ գոգնոց. 1 լեհ չիթ վարագոյր. 2 քարեայ աշտանակք մոմեղինաք։ Ս. Փրկիչ եկեղեցւոյ՝ 1 տիպայ գոգնոց. 1 զոյգ քարեայ աշտանակ մոմեղինաք։ Ս. Աստուածածնի դերեզմանին՝ 1 տիպայ գոգնոց, 1 սաղաւարտ, 1 վարշամակ, 3 շապիկ։ Ս. Ծննդեան եկեղեցւոյն՝ 1 շուրջառ. 1 սաղաւարտ, 1 վարշամակ. 1 փոռուրար. 3 շապիկ. 1 արծաթի բուրվառ։ Ս. Նիկողայոս եկեղեցւոյն Յոպպէի՝ 1 շուրջառ 1 սաղաւարտ. 1 վարշամակ. 1 փոռուրար. 4 շապիկ. 1 լեհ չիթ վարագոյր։ Իսկ Եաղուպ աղայի բարեպաշտուէի տիկինը՝ Սոդոմէ՝ յիշատակեց Ս. Յարութեան տաճարին մէջ կանանց վերնատանը՝ 2 տիպայ գոգնոց, 1 չիթ լեհ վարագոյր, Քրիստոսի դերեզմանին հանդէպ խաչելութեան պատկերի ոսկեզօծ շրջանակը քանդակադրած։